ՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ НОР АРТАГЕРСА

---

21–ը հունվարի, 2014 թվական
Թիվ- 5

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՅԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Նոր Արտագերսի գյուղապետարանը կից Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 21-ին կայացած թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր 5 թերթ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՅԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 597-14
«22» 01 2014 թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
21 հունվարի 2014 թվականի
թիվ- 1 նիստի որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:

Զեկ.՝ Լ. Վասիլյան / աշխատակազմի քարտուղար /

2. Համայնքի 2014թ. ավագանու նիստերի անցկացման ժամանակացույց կազմելու մասին:

Զեկ.՝ Լ. Վասիլյան / աշխատակազմի քարտուղար /

3. Բյուջեի փոփոխություն:

Զեկ.՝ Լ. Վասիլյան / աշխատակազմի քարտուղար /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

21-ը հունվարի , 2014թվական N --2

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքի 2014 թվականի ավագանու նիստերի անցկացման ժամանակացույց կազմելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու նիստերն անցկացնել ոչ ուշ քան երկու ամիսը մեկ անգամ:

1) Առաջին նիստը անցկացնել հունվարի 21-ին:

2) Երկրորդը մարտի 21-ին

3) Երրորդը մայիսի 21-ին

4) Չորրորդը հուլիսի 22-ին

5) Սեպտեմբերի 23-ին

6) Նոյեմբերի 21-ին

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանիներ՝
1. Զ. Զավոյան
2. Բ. Ավդիշյան
3. Ռ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Մ. Հովհաննիսյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

21-ը հունվարի, 2014 թվական N –3 Ն

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N –2 Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին կետով և հիմք ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 6-ի (բյուջեն հաստատելու մասին) թիվ 2 Ն որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանիներ՝
1. Զ. Զավոյան
2. Բ. Ավդիշյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Մ. Հովհաննիսյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ս. Հակոբյան

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդները

Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 783298 դրամ: Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 4633742 դրամ: 2014 թվականի հաստատված բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի 783298 դրամն ուղղել 6.3.1 խումբ ենթախմբի 4212 հոդվածին:

Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի 4633742 դրամից 3000000 դրամն ուղղել 1.3.3 խումբ ենթախմբի 5121 հոդվածին՝ համայնքի կարիքների համար տրակտոր ձեռք բերելու նպատակով: 1633742 դրամը՝ 01.01.01 5122 հոդվածին՝ գույք ձեռք բերելու նպատակով:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից պակասեցնել 945282 դրամ, որից 300000 դրամն ուղղել 01.01.01 խմբի 4214 հոդվածին, 100000 դրամը՝ 4269 հոդվածին:

19345 դրամը՝ 01.01.01 խմբի նախորդ տարիների պարտքի 4212 հոդվածին: 525937 դրամը՝ 6.3.1. խմբի նախորդ տարիների պարքի 4212 հոդվածին:

| ԲԱԺԻՆ, ԽՈՒՄԲ, ԵՆԹԱԽՈՒՄԲ | ՀՈԴՎԱԾ | ԱՎԵԼԱՑՈՒՄ Հազ. դրամ | ՊԱԿԱՍԵՑՈՒՄ Հազ. դրամ |
|---|---|---|---|
| 01 1 1 | 4214 | 300.0 | |
| 01 1 1 | 4269 | 100.0 | |
| 06 3 1 նախ. Տար. Պ. | 4212 | 1309.235 | |
| 01 1 1 նախ. Տար. Պ. | 4112 | 19.345 | |
| 01 3 3 | 5121 | 3000.0 | |
| 01.01.01 | 5122 | 1633,742 | |
| 11 1 51 պահ. ֆոնդ | 4891 | 0 | 945.282 |
| ընդամենը | | 6362.322 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

21 հունվարի, 2014 թվական N –1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու 21-ը հունվարի 2014 թվականի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Ավագանիներ՝
1. Ջ. Ջավոյան
2. Բ. Ավդիշյան
3. Ռ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Մ. Հովհաննիսյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՅԱԿՈԲՅԱՆ